ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

2003
ԹԻՎ 3 (55)
ՄԱՐՏ
ԹՈՂԱՐԿՄԱՆ 10-ՐԴ ՏԱՐԻ

տեղեկագիր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշումները ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ 4

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի թիվ 83-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վարչության 1995 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 141 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 4

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի թիվ 84-Ն որոշումը «Հիսուն, հարյուր, երկու հարյուր և հինգ հարյուր դրամ անվանական արժեքներով 2003 թվականի նմուշի Հայաստանի Հանրապետության մետաղադրամները շրջանառության մեջ դնելու մասին» 4

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի թիվ 85-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի օգոստոսի 6-ի թիվ 259-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 5

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի թիվ 115 որոշումը «Հայաստանի Հանրապետության արժութային շուկայում գործարքներ իրականացնող դիլերների և բրոքերների վարքագծի կանոնակարգ» մեթոդական ուղեցույցին հավանություն տալու մասին» 6

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի թիվ 127 որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2002 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունը հաստատելու մասին» 16

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի թիվ 1/75Ա որոշումը «Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը սահմանելու մասին» 16

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի թիվ 1/108Լ որոշումը «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի, վարկային կազմակերպությունների հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգի (վարկային ռեգիստրի) հաղորդագրությունների դաշտերի ֆորմատները հաստատելու մասին» 16

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ 28

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ,
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ Է ԸՆԴՈՒՆԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ 2003 թվականի մարտի 7-ին և 21-ին ***ՀՀ կենտրոնական բանկի կողմից կնքվող ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքը սահմանվել է 10 %, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային վարկերի տոկոսադրույքը՝ 20 %, ՀՀ կենտրոնական բանկի կողմից ներգրավվող ավանդների տոկոսադրույքը՝5 %*** (որոշումներ թիվ 104, 113):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վարչության 1995 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 141 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին*

Հիմք ընդունելով «Դրամարկղային գործառնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վարչության 1995 թվականի սեպտեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ դրամարկղային գործառնություններ կատարելու կարգի մասին» թիվ 141 որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
27 փետրվարի 2003 թ., N 83-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

Հիսուն, հարյուր, երկու հարյուր և հինգ հարյուր դրամ անվանական արժեքներով 2003 թվականի նմուշի Հայաստանի Հանրապետության մետաղադրամները շրջանառության մեջ դնելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը, 41-րդ, 42-րդ, 47-րդ և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2003 թվականի մարտի 31-ից շրջանառության մեջ դնել հիսուն, հարյուր, երկու հարյուր և հինգ հարյուր դրամ անվանական արժեքներով 2003 թվականի նմուշի Հայաստանի Հանրապետության մետաղադրամները:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2003 թ. փետրվարի 25-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 10.03.03 թ. (ՀՀԳՏ N7, 1.04.03):

** *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2003 թ. փետրվարի 25-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 21.03.03 թ. (ՀՀԳՏ N7, 1.04.03):

2. Սահմանել, որ հիսուն, հարյուր, երկու հարյուր և հինգ հարյուր դրամ անվանական արժեքներով 2003 թվականի նմուշի Հայաստանի Հանրապետության մետաղադրամները Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական վճարամիջոց են և ենթակա են անվերապահ ընդունման իրենց անվանական արժեքներով՝ փողով արտահայտված բոլոր պարտավորությունների դիմաց:

3. 1993 թվականի նմուշի տասը, քսանհինգ, երկու հարյուր և 1998 թվականի նմուշի հիսուն և հարյուր դրամ անվանական արժեքներով Հայաստանի Հանրապետության թղթադրամները Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական վճարամիջոց են մինչև 2004 թվականի ապրիլի 1-ը՝ իրենց անվանական արժեքներով: 2004 թվականի ապրիլի 1-ից 1993 թվականի նմուշի տասը, քսանհինգ և երկու հարյուր և 1998 թվականի նմուշի հիսուն և հարյուր դրամ անվանական արժեքներով Հայաստանի Հանրապետության թղթադրամները Հայաստանի Հանրապետության տարածքում դադարում են օրինական վճարամիջոց լինելուց:

4. Սահմանել, որ 2004 թվականի ապրիլի 1-ից մինչև 2005 թվականի ապրիլի 1-ը 1993 թվականի նմուշի տասը, քսանհինգ, երկու հարյուր և 1998 թվականի նմուշի հիսուն և հարյուր դրամ անվանական արժեքներով Հայաստանի Հանրապետության թղթադրամները կարող են փոխանակվել միայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում և դրանց մասնաճյուղերում:

5. Սահմանել, որ 2005 թվականի ապրիլի 1-ից հետո 1993 թվականի նմուշի տասը, քսանհինգ, երկու հարյուր և 1998 թվականի նմուշի հիսուն և հարյուր դրամ անվանական արժեքներով Հայաստանի Հանրապետության թղթադրամները կարող են փոխանակվել միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում և նրա կողմից լիազորված բանկերում՝ առանց սահմանափակումների:

6. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մամուլի քարտուղարին՝ ապահովել սույն որոշման մասին տեղեկատվության հրապարակումը զանգվածային լրատվության միջոցներով:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
4 մարտի 2003 թ., N 84-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի օգոստոսի 6-ի թիվ 259-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին*

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի օգոստոսի 6-ի թիվ 259-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (այսուհետև՝ կանոնակարգ 2) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1.1. կանոնակարգ 2-ի 23-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«23. Արտարժույթի տնօրինման նորմատիվը սահմանվում է որպես համախառն արտարժութային դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի հարաբերակցություն, որը չի կարող գերազանցել 25 տոկոսը:

Երկրորդ խմբի մեջ մտնող արտարժույթների գծով արտարժութային դիրքը չի կարող գերազանցել բանկի ընդհանուր կապիտալի 5 տոկոսը».

1.2. կանոնակարգ 2-ի 25-րդ կետի 3-րդ պարբերությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ «է» կետով.

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2003 թ. փետրվարի 25-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 21.03.03 թ. (ՀՀԳՏ N7, 1.04.03):

«է) բանկի կողմից վարձակալված հիմնական միջոցների բարելավմանն ուղղված կապիտալ ներդրումների հաշվեկշռային մնացորդի չափով».

1.3. կանոնակարգ 2-ի 38-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«38. Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը (Ն3) որոշվում է

$$Ն3 = \frac{Ռ}{Կ_{ընդ}}$$ բանաձևով,

որտեղ՝

Ռ – ն բանկի կողմից մեկ փոխառուին և նրա հետ փոխկապակցված անձանց տրամադրված վարկերի, այդ թվում՝ բանկային հաշվի վարկավորման, բոլոր այլ փոխառությունների, ֆակտորինգային, լիզինգային գործառնությունների, տրամադրված նախավճարների, կանխավճարների, բանկի կողմից մատուցված ծառայության կամ ապրանքի դիմաց տարաժամկետ վճարումների, ակրեդիտիվների, փոխառուի կամ նրա հետ փոխկապակցված անձանց թողարկած արժեթղթերում ներդրումների, ինչպես նաև բանկի նկատմամբ ցանկացած հիմքով ծագած այլ դեբիտորական պարտավորությունների, նրա պարտավորությունների դիմաց տրված երաշխիքների և երաշխավորությունների (բացառությամբ՝ բանկի թղթակցային հաշիվների), այլ բանկերի կողմից տվյալ բանկի դրամական միջոցների հաշվին և դրանցով ապահովված միևնույն անձանց տրամադրված փոխառությունների և (կամ) երաշխիքների (եթե այդ փոխառության վերադարձելիության ռիսկը ստանձնել է տվյալ բանկը) և դրանց գծով ծախսերի հաշվին ձևավորված պահուստների տարբերության գումարն է: Ընդ որում, վերոհիշյալ տարրերն իրենց համապատասխան պահուստի չափով նվազեցվելուց հետո կշռվում են սույն կանոնակարգի հավելված 3-ով սահմանված ակտիվների համապատասխան կշիռներով:

$Կ_{ընդ}$ - ը բանկի ընդհանուր կապիտալի միջին մեծությունն է հաշվետու ժամանակաշրջանում:

Փոխառության տրման պահին (իսկ սույն կետով նախատեսված այլ պարտավորության ծագման դեպքում՝ պարտավորության ծագման պահին) նորմատիվը հաշվարկվում է նաև տվյալ օրվա ընդհանուր կապիտալի նկատմամբ».

1.4. կանոնակարգ 2-ի 47-րդ կետի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«47. Արտարժութային դիրքը սույն կանոնակարգի 48-րդ կետով սահմանված եղանակներով հաշվարկվող, բանկի արտարժույթով, ինչպես նաև արտարժութային ռիսկ պարունակող դրամային ակտիվների և պարտավորությունների միջև եղած տարբերությունն է: Դրամային ակտիվը կամ պարտավորությունը պարունակում է արտարժութային ռիսկ, երբ դրանց գծով ստացվելիք կամ վճարվելիք գումարների մեծությունները հաշվարկվում են արտարժույթի՝ դրամի նկատմամբ փոխարժեքի միջոցով և, հետևաբար, կարող են տատանվել վերջինիս փոփոխությամբ պայմանավորված».

1.5. կանոնակարգ 2-ի 48-րդ կետի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«48. Արտարժութային դիրքի հաշվարկն իրականացվում է արտարժույթների առանձին տեսակներով՝ ինչպես դրանց գծով ածանցյալ գործիքները (սվոփ, ֆյուչերս, ֆորվարդ, օպցիոն) ներառյալ, այնպես էլ առանց դրանց, և ամփոփվում ըստ արտարժութային երկու խմբերի»:

2. Սույն որոշման 1.1 և 1.3 կետերն ուժի մեջ են մտնում հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից, իսկ 1.2, 1.4 և 1.5 կետերը՝ 2003 թվականի սեպտեմբերի 1-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
4 մարտի 2003 թ., N 85-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

«Հայաստանի Հանրապետության արժութային շուկայում գործարքներ իրականացնող դիլերների և բրոքերների վարքագծի կանոնակարգ» մեթոդական ուղեցույցին հավանություն տալու մասին

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի դրույթները, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 20-րդ հոդվածների դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության արժութային շուկայում գործարքներ իրականացնող դիլերների և բրոքերների վարքագծի կանոնակարգ» մեթոդական ուղեցույցին (կցվում է):

2. Հաստատել «Հայաստանի Հանրապետության արժութային շուկայում գործարքներ իրականացնող դիլերների և բրոքերների վարքագծի կանոնակարգ» մեթոդական ուղեցույցից բխող ներքին փաստաթղթերի ցանկը (կցվում է):

3. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական շուկաներում գործառնությունների վարչությանը՝ պատրաստել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերին ուղղված նամակ՝ կից ուղարկելով սույն որոշման 1-ին կետում նշված մեթոդական ուղեցույցը և առաջարկելով մշակել սույն որոշման 2-րդ կետով հաստատված փաստաթղթերը:

4. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի բանկային վերահսկողության վարչությանը՝ ՔԱՄԵԼՍ գնահատման համակարգով «Մ» չափանիշով կառավարման արդյունավետությունը գնահատելիս հաշվի առնել սույն որոշման 1-ին և 2-րդ կետերով նախատեսված փաստաթղթերի առկայությունը և դրանց կիրառումը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
28 մարտի 2003 թ., N 115

Մ ե թ ո դ ա կ ա ն ո ւ ղ ե ց ո ւ յ ց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԴԻԼԵՐՆԵՐԻ ԵՎ ԲՐՈՔԵՐՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Սույն կանոնակարգը մշակվել է զարգացած երկրների համանման կանոնակարգերի դրույթների հիման վրա՝ ելնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայի մասնակիցների պրոֆեսիոնալիզմի բարձրացման և աշխատաոճի մակարդակը համաշխարհային պրակտիկայում ընդունված չափանիշներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունից:

Սույն կանոնակարգը չունի նորմատիվ ակտի իրավական ուժ. այն ուղեցույց է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի դիլերների, ինչպես նաև արժութային շուկաներում գործող յուրաքանչյուր ֆինանսական կազմակերպության աշխատակիցների համար և նպատակ ունի հաղթահարել ժամանակակից ֆինանսական շուկաներում գործարքների կնքման ժամանակ առաջ եկող տարաձայնությունները և վեճերը:

Ֆինանսական շուկաներում պրոֆեսիոնալիզմ ցուցաբերելու և բարձր մակարդակի աշխատաոճ ապահովելու համար նպատակահարմար է, որ ֆինանսական շուկաների մասնակիցները հետևեն և առաջնորդվեն սույն կանոնակարգով:

ԲԱԺԻՆ 1. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՎԵՐԱՀՍԿՈՒՄ

ԳԼՈՒԽ 1. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Գործարք կնքելու իրավունք ունեցող բոլոր աշխատակիցների գործունեությունը պետք է վերահսկվի տվյալ կազմակերպության ղեկավարության կողմից, որը պարտավոր է գրավոր ձևով վավերացնել դիլերների իրավունքներն ու պարտականությունները՝ սահմանելով.

- գործարքների կնքման ընդհանուր քաղաքականությունը,
- ղեկավարությանը ներկայացվող և գործարքին առնչվող օղակների միջև փոխանակվող հաշվետվությունների ձևերը,
- գործարք կնքելու իրավասություն ունեցող անձանց անվանացանկը և անհատական սահմանաչափերը,
- ֆինանսական շուկաներում թույլատրելի գործիքների և գործընկերների ցանկը, սահմանափակումները և սահմանաչափերը,
- ֆինանսական գործառնությունների իրականացման ձեռնարկ (գործարքների կնքման, ստուգման և հաշվապահական ձևակերպման մեխանիզմները, ժամանակային սահմանափակումները),
- գործարք կնքելու իրավունք ունեցող աշխատակիցների իրավունքներն ու պարտականությունները (աշխատանքի վայրում և դրանից դուրս աշխատակիցների վարքագծին ներկայացվող պահանջներ, չարաշահումների և վատ սովորությունների նկատմամբ բանկի ղեկավարության դիրքորոշումը և այլն),
- գործարքի կնքման ընթացքում կիրառվող տեխնիկական միջոցները,
- այլ առնչվող ուղենիշներ:

ԳԼՈՒԽ 2. ՃԱՆԱՉԵԼ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՋԸ

Անհրաժեշտ է ճանաչել գործընկերոջը ինչպես վարկային ռիսկից խուսափելու, այնպես էլ հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների «լվացումը» կանխելու նպատակով: Դիլերը պետք է գիտակցի, որ գործնական հարաբերությունների հաստատումը լավ չճանաչված անձի հետ դիլերի կազմակերպության համար պարունակում է համբավի ռիսկ:

Գործընկերոջ վերաբերյալ բազմակողմանի տեղեկատվության ստացումն ու վերլուծությունը պետք է իրականացվի ոչ միայն նախքան նոր գործընկերոջ հետ համագործակցություն հաստատելը, այլև ողջ համագործակցության ընթացքում՝ որոշակի պարբերականությամբ, և պետք է վերահսկվի կազմակերպության ղեկավարության կողմից:

ԳԼՈՒԽ 3. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

Գաղտնիության ապահովումը չափազանց կարևոր է շուկայում արդյունավետ գործունեություն ծավալելու և հեղինակավոր տեղ գրավելու համար: Դիլերները և բրոքերները հավասարապես պատասխանատու են գաղտնիության ապահովման համար և առանց կողմերի թույլտվության իրավունք չունեն բացահայտել կամ քննարկել իրականացված կամ ընթացքի մեջ գտնվող գործարքին վերաբերող որևիցե տեղեկություն:

Հեռախոսների վրա տեղադրված բարձրախոսների օգտագործմամբ գործարքների կնքումը թույլատրելի է միայն գաղտնիության ապահովման պարագայում:

Դիլերներ և բրոքերները իրավունք չունեն առանց երկու կողմերի ղեկավարների հատուկ թույլտվության այցելել միմյանց գրասենյակները: Բացի այդ, ինչպես դիլերներն իրավունք չունեն գործարք կնքել բրոքերի կամ այլ դիլերի գրասենյակում, այնպես էլ բրոքերներն իրավունք չունեն գործարքներ կնքել իրենց սեփական գրասենյակից դուրս: Դիլերն իրավունք չունի հանձնարարել բրոքերին հայտնելու գործարքի մյուս կողմի անունը՝ վերջինիս հետ ուղղակիորեն գործարք կնքելու նպատակով:

ԳԼՈՒԽ 4. ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ԳՆՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

Ընդհանուր առմամբ, պետք է խուսափել ոչ ընթացիկ գնով իրականացվող գործարքների կնքումից, քանի որ դա կարող է հանգեցնել ոչ միայն շահույթների կամ վնասների թաքցման, վարկային ռիսկի մեծացման, այլև՝ խարդախության:

Այնուամենայնիվ, ոչ ընթացիկ շուկայական գնի օգտագործումը կարող է անհրաժեշտ լինել ինչպես ժամկետային շուկայում, այնպես էլ ֆինանսական հաստատության հաճախորդների հետ որոշակի գործարքների կնքման դեպքում: Ուստի, ոչ ընթացիկ գնի կիրառումը հնարավոր է միայն ղեկավարի նախնական համաձայնությունը ստանալու դեպքում: Ղեկավարը պետք է համոզված լինի, որ նշված գործարքների գծով հաշվետվություններն ու մոնիտորինգը վերահսկվում են վերը նշված ռիսկերից խուսափելու համար:

ԳԼՈՒԽ 5. ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

Սահմանված ժամերից դուրս իրականացվող գործարքները, մասնավորապես ոչ բանկային դիլինգ կենտրոններում, կատարվում են միայն ղեկավարության նախնական թույլտվությունն ստանալուց հետո: Ղեկավարությունն իր հերթին պետք է հաստատի գործարքն իրականացնելու իրավասություն ունեցող անձանց անվանացանկը, նրանց համար նախապես մշակի գործարքների իրականացման հստակ ուղեցույց, ինչպես նաև ձեռնարկի գործարքների արագ ձևակերպման և հաստատման համար անհրաժեշտ միջոցառումներ:

ԳԼՈՒԽ 6. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Դիլերները և բրոքերները իրենց մասնաճյուղերի, հաճախորդների և թղթակից բանկերի կողմից կարող են ստանալ արտարժույթի գնման կամ վաճառքի այնպիսի հրահանգներ, որոնք պարունակում են լրացուցիչ հստակ սահմանված պայմաններ (սահմանափակ, կորուստների կանխման և այլ հրահանգներ): Գործընկերների միջև լրացուցիչ պայմաններով հրահանգը բացառապես ճշգրիտ և համանման մեկնաբանելու խնդրում համոզված լինելու նպատակով ղեկավարությունը պարտավոր է սահմանել հստակ քաղաքականություն և նման հրահանգների իրականացման մեխանիզմների ընթացակարգ այն աշխատակիցների համար, ովքեր ընդունում և իրականացնում են հատուկ պայմաններով հրահանգները:

Նման հրահանգ ստացող ցանկացած դիլեր պետք է ապահովված լինի կապի ժամանակակից միջոցներով՝ շուկայական կառուցվածքի կտրուկ փոփոխությունների դեպքում գործարքի մասնակից մյուս կողմի հետ անմիջապես կապի մեջ մտնելու հնարավորություն ունենալու համար:

ԳԼՈՒԽ 7. ՍԵՓԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

Ղեկավարությունը պետք է մանրակրկիտ քննարկի իր աշխատակիցներին իրենց հաշվին գործարքներ իրականացնելու թույլտվություն տալու կամ չտալու հարցը: Հարցի դրական լուծման դեպքում ղեկավարությունը պարտավոր է համապատասխան միջոցառումներ ձեռնարկել տվյալ պարագայում հնարավոր չարաշահումները կանխարգելելու ուղղությամբ և գրավոր ձևով վավերացնել դիլերի իրավունքներն ու պարտականությունները: Վերոնշյալ միջոցառումները պետք է ուղղված լինեն հաճախորդների և կազմակերպության շահերը պաշտպանելուն:

ԳԼՈՒԽ 8. ՁԱՅՆԱԳՐՈՒՄ

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ իրականացվող գործարքների ձայնագրումը հնարավորություն է տալիս շատ արագ լուծել ինչպես կողմերի միջև, այնպես էլ կազմակերպության ներսում առաջացած տարաձայնությունները: Բանկերում և բրոքերային կազմակերպություններում խիստ կարևոր է ձայնագրող սարքավորումների կիրառումը, որոնց միջոցով ձայնագրվում են բրոքերների, դիլերների, ինչպես նաև հաշվապահությունում գործարքների հաստատմամբ և վճարումների իրականացմամբ զբաղվող անձանց բոլոր խոսակցությունները: Այն դեպքում, երբ բանկը նոր է սկսում կիրառել նման սարքավորումներ կամ առաջին անգամ է գործարք կնքում տվյալ հաճախորդի հետ, պարտավոր է վերջինիս տեղյակ պահել, որ խոսակցությունը ձայնագրվում է և պահպանվելու է նվազագույնը երկու ամիս: Ժամկետային գործարքներ կնքելու ժամանակ, երբ սխալները կարող են ի հայտ գալ որոշ ժամանակ անց, անհրաժեշտություն է առաջանում գործարքի կնքման ժամանակ արված ձայնագրությունները պահպանել նվազագույնը հինգ օր: Ղեկավարությունը պետք է ապահովի ինչպես ձայնագրությունների անձեռնմխելիությունը թե՛ ձայնագրման և թե՛ պահպանման ընթացքում, այնպես էլ գաղտնիությունը:

ԳԼՈՒԽ 9. ՁՎԱՐՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՆՎԵՐՆԵՐ ԵՎ ԽԱՂԱՄՏԼՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարությունը և աշխատակիցները այլ կազմակերպությունների աշխատակիցների հետ չպետք է քննարկեն իրականացվող գործարքները: Ինչ վերաբերում է նվերներին և զվարճություններին, թեև վերջիններիս առկայությունը գործարար շրջանակներում թույլատրելի է, սակայն սահմանափակ հաճախականությամբ և արժողությամբ: Այս նպատակով ղեկավարությունը պարտավոր է մշակել ուղեցույց՝ սահմանելով նվերների ստացմանն ու զվարճություններին վերաբերող սահմանափակումներ:

Նմանատիպ ուղեցույց պետք է մշակվի նաև շուկայի այլ մասնակիցների հետ տվյալ կազմակերպության աշխատակիցների մոլի խաղերին մասնակցությունը սահմանափակելու նպատակով: Այս ամենն իրենից զգալի վտանգ է ներկայացնում, ուստի աշխատակիցների նմանատիպ վարքագծի նկատմամբ խիստ հսկողության սահմանումը հույժ կարևոր է:

ԳԼՈՒԽ 10. ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐ (ԹՄՐԱԴԵՂԵՐ, ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐ ԵՎ ԱՅԼՆ)

Ղեկավարությունը պարտավոր է դիլերների և բրոքերների հետ քննարկել վերջիններիս կողմից թմրադեղերի, ոգելից խմիչքների և նմանատիպ այլ չարաշահումների արդյունքում առաջացող բացասական հետևանքներից խուսափելու նպատակով ձեռնարկվելիք բոլոր անհրաժեշտ միջոցառումները: Նման հակումներ ունեցող աշխատակցի ներկայությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ կազմակերպության շահերի և շուկայի վրա ընդհանրապես, քանի որ աշխատակիցը դառնում է առավել խոցելի և, հետևաբար, առավելագույնս ենթակա է արտաքին ուժերի ազդեցությանը:

ԲԱԺԻՆ 2. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 11. ԳՈՐԾԱՐՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Դիլերները և բրոքերները նախապես, նախքան որևէ գործարքի կնքումը, պարտավոր են հստակ կերպով ձևակերպել գործարքին առնչվող բոլոր որակական պայմանները: Եթե դիլերի՝ գործարք կնքելու կարողությունը սահմանափակվում է այլ գործոններով, ինչպիսիք են, օրինակ, այլ ֆինանսական կենտրոնների բացման ժամերը, այդ մասին բրոքերներին կամ գործընկերներին պետք է տեղեկացնել համագործակցության վաղ շրջանում և նախքան անունների փոխանակումը:

ԳԼՈՒԽ 12. ԱԾԱՆՑՅԱԼ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՆՔՈՒՄ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ

Դիլերները և բրոքերները հաճախորդներին ածանցյալ գործիք առաջարկելիս նախապես, գործարք կնքելուց առաջ, պարտավոր են հստակեցնել տվյալ գործարքին առնչվող տերմինները: Դիլերը (բրոքերը) պարտավոր է գործարք կնքելուց առաջ հաճախորդին հստակ բացատրել գործարքի հետ կապված բոլոր անորոշությունները: Հատկապես նոր գործիք առաջարկելիս նախընտրելի է գործընկերոջը, նախքան գործարքի կնքումը, թղթային տեսքով գործարքի պայմանների տրամադրումը, որը, սակայն, չի կարող ընդունվել որպես գործարքի հաստատում:

ԳԼՈՒԽ 13. ԱՆՓՈՓՈԽ ԳՆԱՆՇՈՒՄ

Շուկայի բոլոր մասնակիցները, լինեն դրանք պատվիրատու, դիլեր թե բրոքեր, պարտավոր են իմանալ, որ իրենց կողմից սահմանված սակագները ենթակա չեն փոփոխության, այսինքն՝ սակագին սահմանողն այդ գնով շուկայում ընդունված սահմանաքանակներով գործարք կնքելու պարտավորություն է ստանձնում, քանի դեռ այլ գին չի սակարկվել: Բացի այդ, սակագին սահմանողը պետք է նշի, թե որքան ժամանակ այդ գինը ենթակա չէ փոփոխման:

Աշխատելով արագ փոփոխվող շուկաներում, ինչպիսին, օրինակ, արտարժույթի սփոթ գործարքների շուկան է՝ պատվիրատուն պետք է գիտակցի, որ դիլերի կամ բրոքերի կողմից տրված գնանշումներն ուժի մեջ են որոշակի կարճ ժամանակահատվածում: Այդ ժամանակահատվածը կարող է ավելի երկար լինել «հանգիստ» շուկաների պարագայում, ինչպիսիք են, օրինակ, արտարժութային ֆորվարդների կամ դեպոզիտների շուկաները: Ուստի անհրաժեշտություն է առաջանում գնանշումը տալիս նշել նաև վերջինիս գործունեության ժամանակը: Ե՛վ բրոքերը, և՛ դիլերը պետք է իմանան, որ իրենք պարտավոր են գործարքը կնքել իրենց կողմից ընտրված գործընկերոջ հետ գնանշված գնով և շուկայում ընդունված սահմանաքանակով:

Շուկայական սահմանաքանակները շուկաների համար տարբեր են, սակայն հիմնականում հայտնի են տվյալ շուկայի մասնակիցներին: Բրոքերը պարտավոր է աշխատել տվյալ շուկայում ընդունված սահմանաքանակներով: Անծանոթ շուկայում գործարք կնքելուց առաջ դիլերը պարտավոր է նախօրոք ճշտել բրոքերից, թե տվյալ շուկայում ինչպիսի սահմանաքանակներ են գործում:

Ժամկետային գործարքների շուկայում «առանց հիմնավորման հաստատուն» գին կարող է առաջարկվել այն դեպքում, երբ դիլերն ուղղակի գործարքի մեջ է մտնում հաճախորդի հետ կամ բրոքերից իմացել է հաճախորդի անունը: Հակառակ դեպքում դիլերը սահմանում է «վստահությունից կախված հաստատուն» գին կամ գնային միջակայք և պարտավոր է գործարք կնքել այդ գնով կամ գնային միջակայքում ընկած որևիցե գնով, եթե գործարքի մյուս կողմը համապատասխանում է այս դեպքի համար նախապես որոշակիացված հնարավոր մասնակիցներին ներկայացվող պահանջներին: Դիլերը կարող է հրաժարվել այսպիսի գործարք կնքելուց միայն այն դեպքում, երբ տվյալ կարգի համար «վստահության սահմանաչափը» գերազանցվել է: Բրոքերներն ու դիլերները պետք է միասին կազմեն այն հաստատությունների ցանկը, որոնց համար դիլերի գինը «վստահությունից կախված հաստատուն» է:

ԳԼՈՒԽ 14. ԳՈՐԾԱՐՔԻ ԿՆՔՈՒՄ

Դիլերը պետք է գիտակցի, որ գործընկերոջ հետ գործարքի գնի և առևտրային այլ հիմնական պայմանների համաձայնեցման պահից պարտավորություն է ստանձնում: Բրոքերի կամ դիլերի կողմից տրված գնանշումների էական շեղումն ընթացիկ շուկայական գնից դիտվում է որպես ոչ պրոֆեսիոնալ մոտեցում, որը չպետք է խրախուսվի ղեկավարության կողմից: Եթե սակարկվող գները դասակարգվում են ըստ գործարքի առևտրային պայմանների, ապա դիլերներն անառարկելիորեն պարտավոր են գործարքը կնքել այն գնով, որը համապատասխանում է գոյություն ունեցող պայմաններին: Բանավոր համաձայնությունները պարտավորեցնող են. դրան հաջորդող հաստատումը գործարքի կնքման հաստատումն է, որը, սակայն, չի կարող առավելություն ունենալ բանավոր համաձայնեցված պայմանների նկատմամբ: Փաստաթղթերը պատրաստելու ժամանակ առաջացող տարաձայնությունների հավանականությունը նվազագույնին հասցնելու նպատակով գործարք կնքող կողմերն առավելագույն ջանքեր պետք է գործադրեն գործարքի պայմանների վերաբերյալ բանավոր բանակցությունների ընթացքում գործարքի բոլոր նյութական կողմերը արագորեն համաձայնեցնելու ուղղությամբ, իսկ դրանից հետո մնացած բոլոր մանրամասնությունները պետք է հստակեցվեն հնարավորին չափ արագ: Եթե գործարքը կնքվում է բրոքերների միջոցով, ապա վերջիններիս պարտականությունն է՝ գործարքը կնքելուց անմիջապես հետո այդ մասին տեղյակ պահել պատվիրատուին: Որպես կանոն, գործարքը համարվում է կնքված, եթե մի կողմն ընդունում է մյուս կողմի առաջարկը հեռախոսով: Գործարքը չի կարող համարվել կնքված, եթե դիլերի կողմից առաջարկի ընդունման ոչ մի բառային հաստատում չի արվել:

ԳԼՈՒԽ 15. ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ ԲՐՈՔԵՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Բրոքերներն իրավունք չունեն նախօրոք հայտարարել գործարքի մասնակիցների անունները: Վերջիններս բացահայտվում են միայն այն դեպքում, երբ պարզ է դառնում, որ երկու կողմերն էլ լրջորեն մտադիր են գործարք կնքել: Բրոքերները և մյուս մասնակիցները մշտապես պետք է նկատի ունենան, որ գործարքի հետ կապված բոլոր մանրամասնությունները հույժ գաղտնի են ներգրավված կողմերի համար:

Բանկի դիլերները պետք է հնարավորության դեպքում բրոքերներին նախօրոք ցուցում տան, թե ում հետ և ինչ պատճառներով պետք է խուսափել գործարքներ կնքելուց: Միաժամանակ, բրոքերները պետք է պաշտպանեն իրենց հաճախորդների շահերը, ինչպես նաև ճիշտ կատարեն վերջիններիս կողմից տրված ցուցումները: Որոշ գործիքների գծով դիլերները կարող են բրոքերներին տալ տարբեր կատեգորիայի գործընկերների հետ գործարքների գնային տարբերակումների վերաբերյալ ուղեցույց:

Գործարքների իրականացման ընթացքում, բոլոր պայմանները համաձայնեցնելուց հետո, բրոքերները կարող են փոխանակել մասնակիցների անունները միայն վերջիններիս կողմից առարկությունների բացակայության դեպքում: Երբեմն գործարքի մասնակիցներից մեկի համար ցանկալի չէ մյուսի մասնակցությունը: Այս պարագայում բրոքերը, պահպանելով քաղաքավարության նորմերը, չպետք է հայտնի, թե մասնակիցներից կոնկրետ ով է դժգոհություն արտահայտում: Սովորաբար այս դեպքում տուժողի մոտ կարծիք է ձևավորվում այն մասին, որ բրոքերը փաստացի գնանշել է մի գին, սակայն չի կարող ապահովել այդ գնով գործարքից բխող պարտավորությունների կատարումը:

ԳԼՈՒԽ 16. ՎՃԱՐՄԱՆ (ՓՈԽԱՆՑՄԱՆ) ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳՐԵՐ

Վճարման հանձնարարագրերը պետք է ուղարկվեն սպասարկող բանկերին հնարավորին չափ արագ, որպեսզի նպաստեն վճարումների օպերատիվությանը: Միմյանց հետ պարբերաբար գործարքներ կնքող գործընկերներին խորհուրդ է տրվում կիրառել վճարման հանձնարարագրերի ստանդարտացված ձևեր, որոնք հնարավորություն կտան խուսափել միջոցների սխալ փոխանցումների արդյունքում առաջացած խնդիրներից:

Ե՛վ բրոքերի միջոցով, և՛ ուղղակի կերպով իրականացվող գործարքների ժամանակ գործարքը կնքող կողմերը պետք է համոզված լինեն, որ վճարման հանձնարարագրերի բնօրինակում կատարված յուրաքանչյուր փոփոխության դեպքում իրենք, ինչպես նաև վճարումն իրականացնող գործակալը անհապաղ տեղյակ կպահվեն: Իսկ այն դեպքում, երբ գործարքը կնքվել է բրոքերի միջնորդությամբ, և գործարքի կողմերից թեկուզ մեկը գտնվում է այլ երկրում, փոփոխության մասին պետք է տեղեկացվի նաև բրոքերը: Կատարված փոփոխությունների մասին տեղեկատվությունը պետք է ներկայացվի գրավոր, էլեկտրոնային ստանդարտացված եղանակով, տելեքսով կամ նոր հանձնարարագրով, ինչպես նաև հաստատված լինի փոփոխությունը կատարող մասնակցի կողմից: Հանձնարարագրում կատարվող փոփոխությունների մասին բրոքերին տեղյակ չպահելու հետևանքով առաջացած բոլոր հնարավոր թյուրիմացությունների պատասխանատվությունը կրում է փոփոխություն կատարող կողմը:

ԳԼՈՒԽ 17. ԳՈՐԾԱՐՔԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Գրավոր կամ էլեկտրոնային ցանցի միջոցով ստացված հաստատում

Հաստատումների ուղարկման և ստուգման պատասխանատվությունը կրում է հաշվապահությունը (back office), որը գործում է գործարք կնքողներից անկախ: Հաստատումը պետք է ուղարկվի գործարքի կնքումից անմիջապես հետո, որքան հնարավոր է շուտ (գերադասելի է՝ էլեկտրոնային համակարգով), և պետք է հասցեագրված լինի գործընկերոջը կամ վերջինիս սպասարկող բանկի հաշվապահությանը, կամ գործառնական բաժնին:

Այս տիպի հաստատումը (էլեկտրոնային համակարգի միջոցով ուղարկված) հնարավորություն է տալիս անհապաղ և նվազագույն ծախսերով շտկել գործարքի ընթացքում առաջացած սխալները:

Կախված կիրառվող գործիքից՝ հաստատման ֆորմատը և բովանդակությունը տարբեր են լինում, իսկ տեքստի մեջ կիրառվող ցանկացած տերմին, որը կարող է բազմանշանակ մեկնաբանություն ունենալ և տարաձայնությունների առիթ հանդիսանալ, պետք է կամ բացատրվի ծանոթագրության ձևով կամ, կողմերի համաձայնությամբ, պետք է հղում կատարվի որևէ տերմինաբանական ձեռնարկի: Այնուամենայնիվ, բոլոր տիպի հաստատումները պետք է ներառեն հետևյալ տեղեկատվությունը.

- գործարքի կնքման ամսաթիվը,
- գործարքի կնքման ձևը (բրոքեր, հեռախոս, տելեքս, դիլինգ համակարգ և այլն),
- գործարքի մասնակիցների անունները և գտնվելու վայրը,
- գործարքի գինը (փոխարժեքը), գումարը և արժույթը,

- գործարքի տեսակը,
- գործարքի կատարման օրը (value date), մարման օրը (maturity date) և գործարքին վերաբերող այլ ամսաթվեր,
- բանկերի ռեկվիզիտները,
- կիրառվող ստանդարտ տերմիններ և պայմաններ (օր.՝ FRABBA, ISDA, BBAIRS և այլն),
- գործարքին վերաբերող այլ տեղեկատվություն:

Ստանալուն պես, բոլոր հաստատումները պետք է ստուգվեն ամբողջությամբ, և որևէ անհամապատասխանության դեպքում միջոցներ ձեռնարկվեն վերջինս ուղղելու նպատակով: Եթե մասնակցի կողմից ուղարկված հաստատման մեջ հայտնաբերվում է սխալ, ապա նրան անմիջապես տեղյակ են պահում այդ մասին (գերադասելի է գրավոր՝ էլեկտրոնային համակարգի միջոցով):

Հաստատումը չստանալու դեպքում բանկը պարտավոր է հարցում ուղարկել գործընկերոջ հաշվապահությանը կամ ղեկավարությանը: Եթե գործարքն իրականացվում է բրոքերի միջոցով, վերջինս պարտավոր է հաստատումն ուղարկել գործարքի յուրաքանչյուր մասնակցին:

<u>Ստուգում բանավոր հաստատման միջոցով</u>

Ներկայումս դիլերները գրավոր կամ էլեկտրոնային համակարգի միջոցով ուղարկված գործարքի կնքման հաստատումների փոխանակման և ստուգման փոխարեն բրոքերներից (կամ այլ բանկերից, որոնց հետ իրենք կանոնավոր կերպով գործարքներ են կնքում հեռախոսով) պահանջում են բանավոր հաստատել գործարքի կնքումը կամ տելեքսով ուղարկել դրա հաստատումը: Հաստատման նշված եղանակը թույլ է տալիս նվազեցնել գործարքի կնքման ժամանակ առաջացած տարբերությունների թիվն ու չափերը, մասնավորապես, երբ գործարքը կնքվում է բրոքերի միջոցով, կամ երբ գործարքի մյուս կողմը օտարերկրյա մասնակից է: Մեծ կարևորություն պետք է տրվի գործարքների ամենօրյա ստուգումների իրականացմանը:

ԳԼՈՒԽ 18. ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆ, ԽԱԲԵՈՒԹՅՈՒՆ

Խաբեության փորձեր արվում են ամեն օր, և դրանցից շատերը նույնիսկ մանրամասն ծրագրված են: Դիլերները և բրոքերները պետք է շատ զգույշ լինեն, մասնավորապես, երբ գործարքը կնքվում է հեռախոսով: Խորհուրդ է տրվում հեռախոսով իրականացվող գործարքի բոլոր մանրամասնությունները, որոնք ընդգրկված չեն նախապես համաձայնեցված գործարքների կնքման ստանդարտներում, հաստատել տելեքսով կամ հեռահաղորդակցության նմանատիպ այլ միջոցներով, որպեսզի պատասխան ստացողը համոզված լինի, որ գործարքն իրականացվել է: Այս դեպքում մինչև երրորդ կողմին վճարելը հատկապես պետք է ուշադիր լինել:

ԳԼՈՒԽ 19. ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Գործարքը կնքելուց հետո հնարավորին չափ արագ լրացվում և փոխանակվում են անհրաժեշտ փաստաթղթերը: Այս գործընթացը հեշտացնելու նպատակով խորհուրդ է տրվում, հնարավորության դեպքում, կիրառել ստանդարտացված տերմիններ և պայմաններ (տես հավելվածը):

Նմանատիպ փաստաթղթերում յուրաքանչյուր նորամուծություն նախքան գործարքներ կնքելը պետք է սահմանված կարգով հաստատված լինի: Երբ գործարքը կնքվում է վարքագծի կանոնակարգի հավելվածում նշված որևիցե գործիքով, դիլերները և բրոքերները պետք է պարզեն՝ կիրառվելու են արդյոք ստանդարտ տերմիններ, թե առաջարկվելու են փոփոխություններ: Այն գործիքների կիրառության դեպքում, որոնց համար գոյություն չունեն ստանդարտացված տերմիններ, պետք է մանրամասն և հստակ ուշադրություն դարձնել տերմինների և փաստաթղթերի պայմանների քննարկմանը: Առավել բարդ գործարքների, ինչպես օրինակ, ածանցյալների, իրականացման ժամանակ դիլերները պետք է սահմանափակվեն համաձայնեցված առևտրային տերմիններով: Պետք է ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ փաստաթղթերը հնարավորին չափ արագ կազմելու համար:

ԳԼՈՒԽ 20. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Վերոնշյալ ընթացակարգին հետևելու դեպքում պետք է զգալիորեն նվազեն և ի հայտ գալու դեպքում անմիջապես շտկվեն անհամապատասխանությունները: Այնուամենայնիվ, ժամանակառժամանակ առաջ են գալիս սխալներ և հակասություններ ոչ միայն միմյանց հետ անմիջականորեն համագործակցող բանկերի միջև, այլ նաև բանկի և բրոքերի միջև: Ինչպես արդեն նշվել է, կողմերի միջև առաջացած վիճելի հարցերը լուծում է ղեկավարությունը՝ գործարքի մասնակցի և բրոքերի, ինչպես նաև գործարքի երկու մասնակիցների միջև առաջացած խնդիրը դարձնելով ներկառուցվածքային խնդիր:

Այն դեպքերում, երբ առաջացած հակասությունները վերաբերում են գործարքի գումարին, արժույթին, իրականացման օրվան կամ այլ պայմաններին, և գործարքը դեռ ավարտված չէ, խորհուրդ է տրվում մասնակիցներից որևէ մեկի կողմից, հնարավորության դեպքում, անմիջապես (ցանկալի է մյուս կողմի համաձայնությամբ) չեզոքացնել, կասեցնել գործարքը:

Նմանատիպ գործողությունը կարող է դիտվել որպես հակասությունների արդյունքում առաջացող հետագա կորուստներից խուսափելու նպատակով արված զգուշության քայլ և չպետք է մեկնաբանվի որպես մեկ մասնակցի կողմից պարտականությունների չկատարում:

ԳԼՈՒԽ 21. ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐ

Այն երկրներում, որտեղ բրոքերներին տրվող միջնորդավճարներն ազատ բանակցելի են, վերջիններս պետք է գրավոր համաձայնեցվեն յուրաքանչյուր կողմի ղեկավարության հետ: Նախապես համաձայնեցված միջնորդավճարից ցանկացած շեղում երկու կողմերի մասնակիցները պետք է սահմանված կարգով գրավոր վավերացնեն:

Բրոքերները գործարքի գինը սահմանելիս սովորաբար միջնորդավճարները չեն ընդգրկում:

ԳԼՈՒԽ 22. ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարությունը պետք է համոզված լինի, որ յուրաքանչյուր բրոքեր և դիլեր գիտակցում է մշտապես մասնագիտորեն գործելու և այս իմաստով հստակ, ոչ երկիմաստ տերմիններ գործածելու իր պարտականությունը:

Պարզ և հասկանալի լեզվի կիրառությունը բխում է գործարքի մասնակից բոլոր կողմերի շահերից: Ղեկավարությունը պարտավոր է ապահովել կազմակերպությունում ներքին ընթացակարգերի (անհրաժեշտության դեպքում՝ նաև վերապատրաստման դասընթացների) առկայությունը, որոնց՝ տարբեր շուկաներում գործունեություն ծավալող (կամ մի շուկայից մյուսը տեղափոխվող) դիլերը կամ բրոքերը ուշի-ուշով հետևում է՝ շուկաների միջև տերմինաբանության ցանկացած տարբերությունից, ինչպես նաև մասնավոր տերմինի սխալ մեկնաբանման հնարավորությունից խուսափելու նպատակով: Ընդհանուրի կողմից ընդունված հակիրճ տերմինների կիրառությունն, անշուշտ, օգտակար է: Յուրաքանչյուր դիլեր կամ բրոքեր պարտավոր է ծանոթանալ այն սահմանումներին, որոնք վերաբերում են որոշակի շուկաներում օգտագործվող ստանդարտ տերմիններին ու պայմաններին: Սույն կանոնակարգին կցվում է նաև շուկայական տերմինների և սահմանումների ցանկը:

Վարքագծի կանոնակարգի հավելված

Շուկայական տերմինաբանություն և սահմանումներ

Ստորև բերվում են շուկայական տերմինաբանության մեջ առավել գործածական սահմանումները, որոնք թույլ կտան նվազեցնել թյուրիմացությունների քանակը և խուսափել գործարքի կնքման ձախողումից:

1. Արտարժույթի առքուվաճառք և արտարժութային ավանդներ

Դիլեր (Dealer)

Ֆինանսական շուկայի մասնակից, որը գործարքներ է կնքում իր հաշվին՝ իր անունից կամ իր հաշվին՝ այլ անձանց անունից:

Բրոքեր (Broker)

Ֆինանսական շուկայի միջնորդ, որը գործարքներ է կնքում այլ անձանց հաշվին՝ իր անունից կամ այլ անձանց հաշվին՝ այլ անձանց անունից:

Կրոս փոխարժեք (Cross rate)

Երկու արժույթների փոխարժեք՝ հաշվարկված երրորդ արժույթի միջոցով:

Արտարժութային ֆորվարդային պայմանագիր (FX forward contract)

Գործարքի կողմերի միջև կնքվող երկու օրից ավելի կատարման ժամկետով, նախօրոք համաձայնեցված պայմաններով արտարժույթի գնման/վաճառքի պայմանագիր:

Եթե ֆորվարդային գործարքի կատարման օրը ոչ աշխատանքային է, ապա այն իրականացվում է հաջորդ աշխատանքային օրը: Եթե գործարքը կնքվում է ամսվա վերջին օրը, ապա մեկամսյա ֆորվարդային գործարքի կատարման օրը նույնպես ամսվա վերջին օրն է:

Եթե դիլերը կնքում է եռամսյա ֆորվարդային պայմանագիր, ապա գործարքի կատարման օր է հանդիսանում կնքված գործարքի սփոթ ամսաթվից հաշված երեք ամիս հետո նույն օրը:

Ֆորվարդային փոխարժեք (Forward exchange rate)

Ֆորվարդային պայմանագրով սահմանված, հետագայում արտարժույթի առաքման գին:

Արտարժութային ֆյուչերսային պայմանագիր (FX futures contract)

Գործարքի կողմերի միջև միայն բորսայում կնքվող, հետագայում արտարժույթի գնման/վաճառքի ստանդարտացված պայմաններով պայմանագիր:

Արտարժութային սվոփ պայմանագիր (FX swap contract)

Գործարքի կողմերի միջև կնքվող, կատարման տարբեր ժամկետներով նույն ծավալի արտարժույթի միաժամանակ գնման և վաճառքի պայմանագիր: Ընդհանուր առմամբ, սվոփ պայմանագիրը ենթադրում է միաժամանակ սփոթ և ֆորվարդային պայմանագրերի համակցություն:

Արտարժութային օպցիոն պայմանագիր (FX option contract)

Գործարքի կողմերի միջև կնքվող պայմանագրում նշված գնով հետագայում արտարժույթի գնման/վաճառքի պայմանագիր, որը պայմանագրի գնորդին տալիս է գործարքը կատարելու իրավունք, իսկ վաճառողին՝ պարտավորություն. ընդ որում, պայմանագրի գնորդը՝ անկախ իրեն վերապահված իրավունքն իրականացնելուց, պայմանագրի վաճառողին վճարում է որոշակի պարգևավճար:

Արտարժութային քոլլ օպցիոն (Call option)

Պայմանագիր, որի գնորդն արտարժույթը գնելու իրավունք է ստանում:

Արտարժութային փութ օպցիոն (Put option)

Պայմանագիր, որի գնորդն արտարժույթը վաճառելու իրավունք է ստանում:

Հավելագին (Premium)

Սփոթ և ֆորվարդային գների տարբերություն, երբ ֆորվարդային գինը բարձր է սփոթ գնից:

Զեղչ (Discount)

Սփոթ և ֆորվարդային գների տարբերություն, երբ ֆորվարդային գինը ցածր է սփոթ գնից:

Կատարման օր (Value date)

Արժութային և դրամական գործարքների կնքմամբ ստանձնած պարտավորությունների իրականացման օր, այսինքն՝ ֆինանսական միջոցների վճարման կամ առաքման օր:

Այսօրվա կատարում (Value today)

Գործարքի կնքմամբ ստանձնած պարտավորությունների կատարում գործարքի կնքման օրը:

Վաղվա կատարում (Value tommorrow)

Գործարքի կնքմամբ ստանձնած պարտավորությունների կատարում գործարքի կնքմանը հաջորդող աշխատանքային օրը:

Կանոնավոր ժամկետ (Regular dates/periods. Fixed dates)

Ֆորվարդային գործարքի իրականացման օր, որը համապատասխանում է՝ 1 շաբաթ, 2 շաբաթ, 1 ամիս, 2 ամիս, 3 ամիս, 6 ամիս, 1 տարի ժամկետներին:

Անկանոն ժամկետ (Odd/Broken/Cock dates)

Ֆորվարդային գործարքի իրականացման օր, որը չի համապատասխանում ֆորվարդային գործարքի կանոնավոր ժամկետին:

Օվերնայթ (Overnight, O/N)

Գործարք, որի դիմաց միջոցների վճարումը (առաքումը) կատարվում է գործարքի կնքման օրը:

Սփոթ (Spot)

Գործարք, որի դիմաց միջոցների վճարումը (առաքումը) իրականացվում է գործարքի կնքման օրվանից երկու օրվա ընթացքում:

Վաղը/Հաջորդ օրը (Tomorrow/Next, Tom/Next, T/N)

Գործարք, որի դիմաց միջոցների վճարումը (առաքումը) իրականացվում է գործարքի կնքման հաջորդ օրվանից մինչև մյուս գործառնական օրվա վերջը:

Սփոթ/Մյուս օրը (Spot/Next, S/N)

Գործարք, որի դիմաց միջոցների վճարումը (առաքումը) իրականացվում է գործարքի կնքման երկրորդ օրվանից մինչև երրորդ գործառնական օրվա վերջը:

Կետ (Point/Pip)

Գնանշված գնի վերջին թիվը (USD/AMD 583.25, EUR/USD 0.9895):

Բազիսային կետ (Basis point)

Տոկոսի մեկ հարյուրերորդականը (0.01), որը կիրառվում է տոկոսադրույքների փոքրագույն փոփոխությունը ցույց տալու նպատակով:

Սպրեդ (Spread)

Արտարժույթի առքի ու վաճառքի փոխարժեքների, ինչպես նաև ավանդային ու վարկային տոկոսադրույքների տարբերությունը:

Մարժա (Margin)

Արտարժույթի առքի ու վաճառքի փոխարժեքների շեղումը շուկայական փոխարժեքներից, ինչպես նաև ավանդային ու վարկային տոկոսադրույքների շեղումը շուկայական տոկոսադրույքներից:

Հրահանգ (Order)

Կարգադրություն, որը արվում է գործընկերոջը դիլերի (հաճախորդի) կողմից՝ սահմանված պայմաններով գործարք կնքելու համար:

Սահմանափակ հրահանգ (Limit order)

Կարգադրություն, որում սահմանված են գործարքի կատարման գնի սահմանները:

Կորուստների կանխման հրահանգ (Stop loss order)

Կարգադրություն, որում սահմանվում է արժույթի առքի կամ վաճառքի այն շուկայական փոխարժեքը, որին հասնելու դեպքում պետք է իրականացվի որոշակի ծավալի գործարք: Իրականացվում է ստացված օգուտների պահպանման կամ հետագա կորուստների կանխման նպատակով:

ԼԻԲՕՐ (LIBOR)

Լոնդոնի միջբանկային վարկավորման տոկոսադրույք, որը սահմանվում է մի քանի խոշոր բանկերի կողմից սահմանված վարկավորման տոկոսադրույքների հիման վրա:

ԼԻԲԻԴ (LIBID)

Լոնդոնի միջբանկային ներգրավման տոկոսադրույք, որը սահմանվում է մի քանի խոշոր բանկերի կողմից սահմանված ներգրավման տոկոսադրույքների հիման վրա:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԴԻԼԵՐՆԵՐԻ ԵՎ ԲՐՈՔԵՐՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԻՑ ԲԽՈՂ ՆԵՐՔԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ*

- Ֆինանսական գործառնությունների իրականացման ձեռնարկ (գործարքների կնքման, ստուգման և հաշվապահական ձևակերպման մեխանիզմները, ժամանակային սահմանափակումները),
- ֆինանսական շուկաներում թույլատրելի գործիքների և գործընկերների ցանկը, սահմանափակումները և սահմանաչափերը,
- գործարք կնքելու իրավասություն ունեցող անձանց անվանացանկը և անհատական սահմանաչափերը,
- ղեկավարությանը ներկայացվող և գործարքին առնչվող օղակների միջև փոխանակվող հաշվետվությունների ձևերը,
- գործարք կնքելու իրավունք ունեցող աշխատակիցների իրավունքներն ու պարտականությունները (աշխատանքի վայրում և դրանից դուրս աշխատակիցների վարքագծին ներկայացվող պահանջներ, չարաշահումների և վատ սովորությունների նկատմամբ բանկի ղեկավարության դիրքորոշումը և այլն),
- գործարքների կնքման ընթացքում կիրառվող տեխնիկական միջոցների շահագործման ուղեցույց:

* *Բանկի կողմից նշված փաստաթղթերի ներկայացման ֆորմատն ազատ է:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2002 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունը հաստատելու մասին

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին կետի և 20-րդ հոդվածի «թ» կետի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2002 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
31 մարտի 2003 թ., N 127

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը սահմանելու մասին

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի հուլիսի 23-ի թիվ 245-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Հայաստանի Հանրապետության բանկային տոկոսի հաշվարկային դրույքի հաշվարկման և սահմանման կարգի» 4-րդ կետը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով՝ որոշում եմ.

1. Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը սահմանել տարեկան 18 տոկոս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
6 մարտի 2003 թ., N 1/75Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի, վարկային կազմակերպությունների հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգի (վարկային ռեգիստրի) հաղորդագրությունների դաշտերի ֆորմատները հաստատելու մասին

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածը՝ որոշում եմ.

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի, վարկային կազմակերպությունների հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգի (վարկային ռեգիստրի) հաղորդագրությունների դաշտերի ֆորմատները՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վիճակագրության վարչության բանկային համակարգի զարգացման հետազոտությունների բաժնին՝ սույն որոշումը ստորագրվելու պահից եռօրյա ժամկետում «Սի-Բի-էյ-Նեթ» ցանցի միջոցով առաքել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է որոշումը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերին առաքելու պահից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
28 մարտի 2003 թ., N 1/108L

Հավելված 1
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի նախագահի
2003 թվականի մարտի 28-ի թիվ 1/108L որոշմամբ

Հաղորդագրությունների դաշտերի ֆորմատը
Ստանդարտ տեղեկագրերի դաշտերի կառուցվածքը

Պ/Օ*	Դաշտի համարը	Դաշտի անվանումը	Դաշտի ֆորմատը
Պ	B01	Բանկի կոդը	3n
Պ	B02	Մասնաճյուղի կոդը	2n
Պ	B03	Անվանումը	30x
Պ	B04	Կարճ անվանումը	15x
Պ	B05	Հասցեն	50x
Օ	B06	Բանկի տեօրենը	30x
Օ	B07	Գլխավոր հաշվապահը	30x
Պ	C01	Արտարժույթի կոդը	3x
Պ	C02	Անվանումը	30x
Պ	C03	Միավորը	5n
Պ	C04	Փոխարժեքը	15number
Պ	C05	Ամսաթիվը	8d
Պ	T01	Կոդը	3x
Պ	T02	Փոխատվության տեսակը	30x
Պ	S01	Կոդը	3x
Պ	S02	Անվանումը	30x
Պ	D01	Կոդը	3x
Պ	D02	Աղբյուրը	30x
Պ	P01	Կոդը	3x
Պ	P02	Սեփականության ձևը	30x
Պ	R01	Կոդը	3x
Պ	R02	Ռիսկի դասը	30x
Պ	Z01	Կոդը	3x
Պ	Z02	Մարզի անվանումը	30x

** Պ - պարտադիր, Օ - օժանդակ:*

Դաշտերի նկարագրությունը

Դաշտ :B01:Բանկի կոդը
ֆորմատ 3n
այս դաշտում նշվում է այն բանկի կոդը, որին ուղարկվում է տեղեկագիրը,

Դաշտ :B02:Մասնաճյուղի կոդը
ֆորմատ 2n
այս դաշտում նշվում են ուղարկվող հաղորդագրության մեջ :B01: դաշտում նշված բանկի մասնաճյուղերի կոդերը,

Դաշտ :B03:Անվանումը
ֆորմատ 30x
այս դաշտում նշվում է :B01: դաշտում ներկայացված բանկի անվանումը,

Դաշտ :B04:Կարճ անվանումը
ֆորմատ 15x
այս դաշտում նշվում է :B01: դաշտում ներկայացված բանկի կարճ անվանումը,

Դաշտ :B05:Հասցեն
ֆորմատ 50x
այս դաշտում նշվում է :B01: դաշտում ներկայացված բանկի հասցեն,

Դաշտ :B06:Բանկի տնօրենը
ֆորմատ 30x
այս դաշտում նշվում է :B01: դաշտում ներկայացված բանկի տնօրենը,

Դաշտ :B07:Գլխավոր հաշվապահը
ֆորմատ 30x
այս դաշտում նշվում է :B01: դաշտում ներկայացված բանկի գլխավոր հաշվապահը,

Դաշտ :C01:Արտարժույթի կոդը
ֆորմատ :3x
այս դաշտում նշվում է արտարժույթի կոդը,

Դաշտ :C02:Անվանումը
ֆորմատ :30x
այս դաշտում նշվում է :C01: դաշտում նշված արտարժույթի անվանումը,

Դաշտ :C03:Արտարժույթի միավորը
ֆորմատ :5n
այս դաշտում նշվում է :C01: դաշտում նշված արտարժույթի միավորը,

Դաշտ :C04:Արտարժույթի փոխարժեքը
ֆորմատ :15number
այս դաշտում նշվում է :C01: դաշտում նշված արտարժույթի փոխարժեքը,

Դաշտ :C05:Ամսաթիվը
ֆորմատ :8d
այս դաշտում նշվում է տեղեկագրի մուտքագրման ամսաթիվը, որը ներկայացվում է ddmmyyyy սկզբունքով,

Դաշտ :T01:Կոդը
ֆորմատ :3x:
այս դաշտում նշվում է տրամադրվող փոխատվության տեսակի կոդը,

Դաշտ :T02:Փոխատվության տեսակը
ֆորմատ :30x
այս դաշտում նշվում է տրամադրվող փոխատվության տեսակը,

Դաշտ :S01:Կոդը
ֆորմատ :3x:
այս դաշտում նշվում է փոխատվության օգտագործման ոլորտի կոդը,

Դաշտ :S02:Անվանումը
ֆորմատ :30x
այս դաշտում նշվում է ոլորտի անվանումը,

Դաշտ :D01:Կոդը
ֆորմատ :3x:
այս դաշտում նշվում է փոխատվության տրամադրման աղբյուրի կոդ,

Դաշտ :D02:Աղբյուրը
ֆորմատ :30x
այս դաշտում նշվում է տրամադրման աղբյուրի անվանումը,

Դաշտ :P01:Կոդը
ֆորմատ :3x:
Ասս դաշտում նշվում է փոխառուի սեփականության ձևի կոդը,

Դաշտ :P02:Սեփականության ձևը
ֆորմատ :30x
այս դաշտում նշվում է սեփականության ձևի անվանումը,

Դաշտ :R01:Կոդը
ֆորմատ :3x:
այս դաշտում նշվում է տրամադրվող փոխատվության վարկային ռիսկի դասի կոդը,

Դաշտ :R02:Ռիսկի դասը
ֆորմատ :30x
այս դաշտում նշվում է վարկային ռիսկի դասի անվանումը,

Դաշտ :Z01:Կոդը
ֆորմատ :3x:
այս դաշտում նշվում է փոխատվության տրամադրման մարզի կոդը,

Դաշտ :Z02:Մարզի անվանումը
ֆորմատ :30x
այս դաշտում նշվում են մարզերի անվանումները:

Շտեմարանում գրանցվող վարկերի կառուցվածքը

Պ/Օ	Դաշտի կոդը	Դաշտի անվանումը	Դաշտի ֆորմատը
Պ	101	ՎՌԿ	14n
Պ	102	Բանկի կոդը	3n
Պ	103	Մասնաճյուղի կոդը	2n
Պ	201	Փոխառուի կարգավիճակը	1a
Պ	202	Փոխառուի անունը/անվանումը	140x
Օ	203	Փոխառուի ազգանունը	50x
Օ	204	Փոխառուի հայրանունը	50x
Պ	205	Փոխառուի անձնագրի կոդը/հարկային կոդը	20x
Պ	206	Մարզի կոդը	3x
Օ	207	Հասցեն	140x
Օ	208	Սեփականության ձևը	3x
Պ	209	Ռեզիդենտությունը	1n

Պ	210	Բանկի հետ կապված են/կապված չեն	1n
Օ	211	Գործադիր տնօրենը	50x
Պ	212	Տարբերակի հերթական համարը	4n
Պ	301	Պայմանագրի ամսաթիվը	8d
Պ	302	Պայմանագրի համարը	20x
Պ	303	Փոխատվության փոփոխության ամսաթիվը	8d
Օ	304	Փաստացի մասնակի մարման ամսաթիվ	8d
Պ	305	Փաստացի տրամադրված գումարի ամսաթիվը	8d
Պ	306	Պայմանագրի մարման ամսաթիվը	8d
Պ	307	Փոխատվության վիճակը	1n
Օ	308	Գրավի գումարը	15number
Օ	309	Գրավի առարկան	140x
Օ	310	Գրավի այլ նշումներ	140x
Պ	401	Փոխատվության տեսակը	3x
Պ	402	Տրամադրման աղբյուրը	3x
Պ	403	Վարկային ռիսկի դասը	3x
Պ	404	Օգտագործման ոլորտը	3x
Պ	405	Օգտագործման մարզը	3x
Պ	406	Պայմանների վերանայման քանակը	3n
Օ	407	Մասհանման գումարը	15n

Պ	501	Արտարժույթի կոդը	3x
Պ	502	Պայմանագրով նախատեսված գումարը	15number
Պ	503	Պայմանագրով նախատեսված տոկոսը	8number
Պ	504	Տրամադրված գումարը	15number
Պ	505	Մարված գումարը	15number
Պ	506	Փաստացի մնացորդը	15number
Պ	507	Ժամկետանց պարտավորությունները	15number
Պ	508	Ժամկետանց տոկոսը	15number

Պ	601	Երաշխավորողի կարգավիճակը	1a
Պ	602	Երաշխավորողի անունը/անվանումը	140x
Օ	603	Երաշխավորողի հայրանունը	50x
Օ	604	Երաշխավորողի ազգանունը	50x
Պ	605	Անձնագրի կոդը/հարկային կոդը	20x
Օ	606	Հասցեն	140x
Պ	607	Մարզի կոդը	3x
Պ	608	Երաշխիքի գումարը	15number
Օ	609	Երաշխավորողի սեփականության ձևը	3x

Պ	701	Փոխկապակցված անձի կարգավիճակը	1a
Պ	702	Փոխկապակցված անձի անունը/անվանումը	140x
Օ	703	Փոխկապակցված անձի հայրանունը	50x
Օ	704	Փոխկապակցված անձի ազգանունը	50x
Պ	705	Փոխկապակցված անձի անձնագրի կոդը/հարկային կոդը	20x
Պ	706	Մարզի կոդը	3x
Օ	707	Հասցեն	140x
Պ	708	Վարկային ռեգիստրի կոդը (փոխկապակցված անձի վարկերի կոդերը)	140x
Օ	709	Փոխկապակցված անձի սեփականքյան ձևը	3x

Պ	901	Սեփականատիրոջ կարգավիճակը	1a
Պ	902	Սեփականատիրոջ անունը/անվանումը	140x
Օ	903	Սեփականատիրոջ հայրանունը	50x
Օ	904	Սեփականատիրոջ ազգանունը	50x
Պ	905	Սեփականատիրոջ անձնագրի կոդը/հարկային կոդը	20x
Պ	906	Մարզի կոդը	3x
Օ	907	Հասցեն	140x
Օ	908	Սեփականատիրոջ սեփականության ձևը	3x

Դաշտերի նկարագրությունը

Դաշտ :101:Վարկային ռեգիստրի կոդը
Ֆորմատ :14n:
Այս դաշտում նշվում է փոխատվության կոդը վարկային ռեգիստրում, որը պարունակում է՝
3n - բանկի կոդը,
6d - ddmmyy փոխատվության մուտքագրման ամսաթիվը,
4n - փոխատվության հերթական համարը տվյալ օրվա սահմաններում. հերթական համարը սկսվում է 0001-ից մինչև 9999-ը,
1k - ստուգիչ նիշ

Դաշտ :102:Բանկի կոդը
Ֆորմատ :3n
Այս դաշտում նշվում է փոխատվությունը տրամադրող բանկի կոդը:

Դաշտ :103:Մասնաճյուղի կոդը
Ֆորմատ :2n
Այս դաշտում նշվում է փոխատվությունը տրամադրող բանկի մասնաճյուղի կոդը (եթե փոխատվությունը տրամադրվել է գլխամասայինի կողմից, ապա դաշտը պարտադիր հավասար է 00-ի (2 զրո):

Դաշտ :201:Փոխառուի կարգավիճակը
Ֆորմատ :1a
Այս դաշտում՝ կախված փոխառուի ֆիզիկական կամ իրավաբանական անձ լինելուց, նշվում են P կամ J տառերը:

Դաշտ :202:Փոխառուի անունը/անվանումը
Ֆորմատ :140x:
Այս դաշտում փոխառուի ֆիզիկական անձ լինելու դեպքում նշվում է անունը, իրավաբանական անձ լինելու դեպքում՝ անվանումը:

Դաշտ :203:Փոխառուի ազգանունը
